Ահա լրանում է եօթն ամիս, որ ես սովորում եմ մի նոր հեղինակութեամբ աշխատասիրած քերականութեան վերայ, նոր ղիւրին ոճով, գլխաւորապէս գործնական դասախօսութեամբ, մի ուսումնական վարժապետի մօտ, որի գեղեցիկ ըմբռնելի ձևով դասախօսութիւնը յիրաւի ուշադրութեան արժանի է։ Վերջապէս եօթն ամսոյ մէջ կհամարձակիմ ասել, բաւականին սովորելով և միանգամայն ծծելով գեղեցիկ նիւթերը քերականութեան, ուրիշ ուսանելի առարկայից հետ։ — Ահա իմ աշխատութեան նախախայծ փոքրիկ պտուղները, իմ քնքոյշ քոյրերին ցոյց տալով և մոցնելով նոցա մաքուր և մատղաշ սրտերի մէջ ուսումի ամենահարկաւորութիւնը։

Ուստի խոնարհաբար խնդրում եմ Խմբագրութենէդ պատուական Արարատ, որ իմ այս փոքրիկ յօդուածը հանդերձ առանձին և մի ոտանաւորով տեղաւորել նորա ոսկէ տողերի մէջ, շարժելու շատերի սիրտը և համակրութիւնը դէպ ի ուսումն։

Օրիորդ Հռոսկոն Տ. Ա-էրիանց.

Ի 29-ն Մայիսի 1871-ի
Ի Թաղիատան Նորի։

ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՞նչու ես տխրած, մայր իմ Հայաստան,
Ի՞նչու ես սգով, լցուած անպայման,
Որդիքդ ժողված, դէպ քեզ կդիմենք,
Ոտկէ դար, փառաց, քեզ կհասցնենք։

Թափիր քո սուգը, սրտիդ կսկիծներ,
Վերցուր սև քողդ, փարատիր խոցեր,
Թափիր քեզանից տխրութեան փոշին,
Նորոգ պճնուիր, զարդով թանկագին։

Սրբազան հողդ քաղցր է ինձ համար
Պառաւեալ մայր իմ, Հայաստան աշխարհ,
Երբեմն օտարաց կոխան է եղած,
Բայց էլի Հայոց քաղցր է անկասկած,

Երբ քո ցաւերը, աչերս տեսնում է,
Դառը արցունքով, սիրտս ողբում է,
Քեզ եմ աղաչում, երեսիդ կանգնած
Բարձիր քեզանից ամպեր սևամած։

Աչս բաց անեմ՝ Մասիսին նայեմ,
Ախ իմ կարօտս քեզանից կառնեմ,
Կարօտ սիրավառ, կարօտ մայրական,
Որ որդուոց սրտից կլղիսէ անմնան։

Արդէն ծաղկել են քո բուրաստաններ,
Մայր կժողովես քաղցր պտուղներ,
Թալկացեալ սիրտդ՝ զօրութիւն կառնէ,
Դարևոր վշտից յողջութիւն դիմէ։

Պանդխտութեան մէջ հերիք թափառես,
Աղի արցունքով սուրբ կեանքդ մաշես,
Սուրբ կաթով սնուած որդիքդ ցիրուցան,
Ընդունիր ծոցդ, քաղցրիկ Հայաստան։

Իմ սուրբ Հայաստան, քեզ շատ եմ սիրում
Ամեն բոպէում քեզ չեմ մոռանում,
Երբ որ տեղիցս ես վեր եմ կենում,
Քեզ համար յԱստուած աղօթք եմ անում։

Օրիորդ Հռոսկոն Նազարեան
Տէր Ա-էրիանց։

Թաղիատան Նորի։

ՄԵԾ ՊԱՐՆԻ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Թէպէտ իմ անզօր զրիչս չունի այնքան կարողութիւն հրատարակել Ազգային քաջագործութիւնները, բայց երախտիք բազմաջան և աղգապարծանք վաստակաւորաց ստիպում է և յատուկ պարտաւորութիւն եմ համարում ծանուցանել իմ սիրելի Ազգին, Այո՛ քաջագործութիւնն մեծ Պարնիոյ հասարակութեան որ յատուկ հիմնադիրն գոլով Փամբակ դաւառակի, յառաջինութենէ ստիպուած ցանկալի համարեցին մեկ յաւերժական յիշատակ յետ թողուլ. ի՞նչ եթէ ոչ իրենց վաղեմի հին եկեղեցին Նորոգել հասարակ շինութեամբ. մինչև ցայն միջոցը չէին տեսած ոչ կոփածոյ քարինք և ոչ յարմար որմունք, ի